



ԿԻՄ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ԵՐԵՔ ԹՈՒՂԹ

Թուղթը, որ համապատասխանում է այսօրվա մամակին, եկեղեցական մատենագրության տարածված ժանր է: Ամենին էլ պատահական չէ, որ Բարսեղ Կեսարացին այն համարում է սատվածային մեծագույն պարգևներից մեկը՝ „Μία δὲ τῶν μερίτων ὁμαρῶν ἐστὶ τὰς εὐαγγελίας ὁ εὐχόμενος τὰς χερίτας καὶ ἡ παροῦσα αὐτῇ“¹. Բարսեղ Կեսարացին մի ստիթով դժգոհում է, որ եկեղեցական բազմազաղ հոգսերի պատճառով մույնիսկ ընկերների հետ թղթակցելու ժամանակ չի մնում: Այդուամենայնիվ, այսօր մրա անվամբ մեզ է հասել շուրջ 380 անուն թուղթ, որոնք իրենց արծարծած խնդիրների բազմազանությամբ ու խորությամբ ունեն արևելագիտական որոշակի կարևորություն²: Երբ գրվում էին Բարսեղ Կեսարացու թղթերը քրիստոնեական հավատի երկրպագուները դժվարին սլաքար էին մղում մախ հեթանոսության և ապա դավանական զանազան հոսանքների դեմ: Ահա թե ինչու դժվար է մատնացույց անել ժամանակի ուղղափառ եկեղեցու համար ինչ որ չափով էական խնդիր, որ արծարծված չլինի Բարսեղ Կեսարացու թղթերում: Նրանցում հանդես են գալիս կայսրեր, գավառապետեր, առօրյա ամենահասարակ զբաղմունքների տեր մարդիկ, Ամտիոքի, Ալեքսանդրիայի, Փոքր Հայքի³ և Արևմուտքի զանազան եպիսկոպոսներ, ուսանողներ, աքսորյալներ, անանուն այրեր և այլի-

¹ Saini Basile, Lettres, II, 1961, էջ 148: Այսուհետև սույն հրատարակության հղումները արտացոլելու ևնք բուն տեքստում: Թղթերի հայերեն թարգմանություններից կատարվող քաղումները հղելու ևնք ըստ սույն հրապարակման:

² Հնդումված է Կեսարացու թղթերը ժամանակագրական առումով բաժանել երեք խմբի. ա) 357—371 թթ. (48 թուղթ), բ) արքեպիսկոպոսության տարիներին գրված թղթեր (248 թուղթ), գ) թղթեր, որոնց գրության ժամանակը անորոշ է (տե՛ս „Χριστιανικὸς ὕμνος“, СПб., 1866, январь, էջ 16):

³ Բարսեղ Կեսարացին հայկական թեմի եպիսկոպոսներից մեկին ուղղած թղթում նկատում է, որ Փոքր Հայքի մյուս եղբայրներից բավական հաճախ է գրում „շէն տէς πλοῖς ἀδελφούς ἐπιστάλλωνας τοῖς κατὰ τὴν μερὲν Ἀρμενίαν...“ Lettres, II, էջ 148):

ներկուսակրոն աղջիկներ ու աշխարհիկ կանայք, զանազան վանական հաստատություններ և այլն:

Հայտնի է, որ Բարսեղ Կեսարացին տարիներ շարունակ պաշտոնական շփման մեջ էր Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի՝ Եվսեբիոս Կեսարացու հետ: Սակայն Բարսեղ Կեսարացուց հայտնի է ընդամենը մի քանի թուղթ՝ ուղղված Եվսեբիոս Կեսարացուն: Դա, թերևս, պիտի բացատրել նրանց հետագա ոչ բարեկամական փոխհարաբերությամբ: Ինչևէ, Եվսեբիոս Կեսարացուն ուղղված Բարսեղ Կեսարացու հրատարակվող թուղթը կարևոր է թե՛ ժամանակի եկեղեցու բազում հոգսերի և թե՛ հիշյալ նշանավոր անձանց գործունեության գնահատման իմաստով: Եկեղեցուն վերահաս վտանգի պահին Բարսեղ Կեսարացին դիմում է Եվսեբիոս Կեսարացուն. «Իսկ յորժամ դարձեալ տեսանէմք զքո պարկեշտ վայելչութիւնդ եւ զմտաւ ածեմք, զի զքեզ բծիշկ ի յեկեղեցիս հիւանդութեանց Տէրն մեր շտեմարանեաց, վերստին առնումք զմեր խորհուրդս» (էջ 181բ):

Թուղթն ամբողջությամբ վերցրած արժեքավոր սկզբնաղբյուր է IV դարի ՅՕ-ական թվականների ուղղափառ եկեղեցու վիճակի, մանավանդ հարկադիր պայքարի գնահատման առումով. «Լուծաւ ամենայն եկեղեցի՝ որպէս եւ ոչ քո իմաստութիւնդ անգիտանայ եւ տեսանես ամենեւին յիրաքանչիւրումն, իբրեւ ի բարձրաւանդակ իմեքէ դիտանոցէ մտաւք տեսութեան: Ջիւարդ իբրեւ ի խորոջ բազմաց ի միասին նաւեցելոց ի բռնութենէ ալեացն ամենեքեան առ իրեարս պատառին եւ լինի նաւաբեկութիւնն» (էջ 181բ—182ա): Բարսեղ Կեսարացին եկեղեցու տարրերումները հրետակ նկարագրելուց հետո թղթում անդրադառնում է նավաբեկության հիմնական պատճառներին և կոչ անում Եվսեբիոս Կեսարացուն սատար կանգնելու:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 4150 գրչագրի մի վկայության համաձայն՝ Գրիգոր Նազիանզացին «Վասն վարուց անապատականաց» խնդրի շուրջ Բարսեղ Կեսարացուն ուղղված թուղթ ունի⁴: Հին թարգմանությամբ պահպանվել է Կեսարացու պատասխան թուղթը. «Թուղթ առ սուրբն Գրիգոր Աստուածաբան՝ եպիսկոպոս Նազիազու՝ Յաղագս վարուց» («Դժդժն ԵԶԴԴժ», Lettres, I, էջ 5—18): Անապատական կյանքի կարևորությունը հիմնավորելուց հետո, թղթում Բարսեղ Կեսարացին պատճառաբանում է ճգնափորական կյանքի անհրաժեշտությունը, սուրբ Գրոց և առհասարակ հայրաբանական գրականության իմացության գործնական հարկավորությունը: Բարսեղ Կեսարացուն հիասթափեցնողը, ինչպես հուշում է թուղթը, մարդկանց փոխհարաբերությունների մեջ տեղ գտած չարակամության, վատի ակնհայտ գոյությունն է: Այս առումով ուշագրավ է Աթենքը թողնելու մասին նրա իսկ բացատրությունը. «...թուլի զքաղաքայինսն կրթարանս իբրեւ զքիրուց չարեաց պատճառս, իսկ զիս ինքն չե: Եւս կարացեալ ի բաց թողուլ» (էջ 183ա): Ավելին, աշխարհիկ կյանքը միշտ և ամենուր մարդկանց թելադրում է իր օրինաչափ հոգսերը: Առկա հոգսերին ամուսնությամբ նորերն են ավելանում. քանի դեռ չկան երեխաներ մտահոգվում են նրանց չգոյությամբ, իսկ երբ երեխաներ են ծնվում ավելանում են նաև մանկասանության հոգսը, կնոջ պահպանությունը, տան խնամակալությունը, սպասավորի անհրաժեշտությունը, հարևանի հետ կապված անախորժությունը, վաճառաշահության վնասաբերությունը, հողի հոգսը և այլն:

⁴ «Արդ նրեի յայսմ մատենի, թէ նախ Աստուածաբան գրուց առ սա ի սորին անապատն յոր անապատէն վասն վարուց անապատականաց» (ձեռ. № 4150, էջ 78ա):

Բարսեղ Կեսարացու ընդհանրացմամբ՝ «Ամենայն ար յատուկ գայ՝ բերելով անձին խաւարումն: Գիշերք՝ զտուրն քննական հոգսն փոխադրեալք, ի մոյն յերեւոյթսն, խաբեն զմիտսն» (էջ 183բ—184ա):

Ինչպես և սպասելի էր, վաղ միջնադարյան հոգևոր գործիչ-մտածողի համար միակ ճշմարիտ ելքը աշխարհիկ կյանքից հրաժարվելն է. «Իսկ այսոցիկ մի է փախուստ՝ որոշումն յաշխարհայնոցս ամենեցուն: Եւ յաշխարհէ զճացումն՝ ոչ արտաքոյ սորա լինել մարմնապէս, այլ վշտակցութեամբ..» (էջ 184ա): Թուղթը, ընդհանուր առմամբ, խոհափիլիսոփայական ինքնատիպ գործ է: Բարսեղ Կեսարացին համոզիչ պատճառաբանություններով խոսում է մարդկային վարվեցողության ընդունված ու մերժելի կողմերի և առհասարակ բնավորության դրսևորման եղանակների մասին: Նա բացատրում է, որ ո՛չ խոսելու ունակությունը, ո՛չ աչքերի արտահայտչականությունն ու մարմնի վայելուչ տեսքը, լսելու կարողությունը, խելկատակելու հնարամտությունը և ոչ էլ որևէ այլ բան անկարող են հոգու արիության, հարստության ու մաքրության չափանիշ հանդիսանալ:

Թուղթը որոշակիորեն հետապնդում է հոգևոր-ուսուցողական նպատակ: Անորյա կյանքում, բացատրում է Բարսեղ Կեսարացին, կյանքի գոյատևման, մասնավորապես կենսապահպանման համար խիստ անհրաժեշտ են կերակուրը, հացը, ջուրը, որոնք ոչ չափավոր ու անհարկի օգտագործելու, իր իսկ բառերով ասած՝ ոչ սովածաբար ընդունելու դեպքում կարող են պատճառ դառնալ զանազան հիվանդությունների: Մոտավոր մամուլայամբ դատելով, անառողջ, դատարկաբան միտքն անկարող է ըստ էության ընկալել աստվածային իմացությունը: Փաստորեն, եթե անհմարին է պատկերացնել մարդկային երկարատև գործունեություն առանց կենսապահպանման գործոնների, առավել ևս հնարավոր չէ հոգևոր ծառայություն առանց համապատասխան միջոցների:

Գրիգոր Նազիանզացուն ուղղված Բարսեղ Կեսարացու թղթերը չունեն անձնական թղթակցությանը հատուկ մանրամասներ և գերակշռող մասով արտացոլում են ժամանակի հոգևոր-դավանական խնդիրների հետ կապված այլազան հարցեր: Նման բնույթի մեկ այլ թղթում՝ «Թուղթ առ սուրբն Գրիգոր Աստուածաբան՝ եպիսկոպոս Նազիազու՝ Յաղագս կրամաւորական վարուց» (Προί τῷ εὐσεβῶς βίῳ μοναχῶν, Lettres, I, էջ 52—57), Բարսեղ Կեսարացին կրկին անդրադառնում է հավատի անադարտության կարևորությանն ու հոգևոր պարտականությունների առանձնահատկություններին: Կեսարացու սույն թուղթը ամբողջությամբ վերցրած մի ինքնատիպ ծրագիր է հոգևոր պարտականությունների կատարման և առհասարակ եկեղեցական շրջաններում վարվեցողության և սպասավոր դասի անելիքների մասին: Նա թվարկում է մոտ 43 կետ այն մասին, թե ինչը ընդունելի է, կարելի է և ինչը՝ դատապարտելի և մերժելի:

Հրապարակվող թղթերի և դրանց համապատասխան հունարեն բնագրերի համեմատությամբ պարզվեց հետևյալը. առաջին թղթի հունարենը չգտնվեց, երկրորդ թուղթը հիմնականում համընթաց է հունարենին և արձանագրելի հեռացումներ գրեթե չկան: Ինչ վերաբերում է երրորդ թղթին, ապա այն ունի որոշ օտարումներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կետերում.

1 Կան դեպքեր երբ հայերենի այս կամ այն հատվածը հունարենում բացակայում է: Այսպես, օրինակ՝ ճշված երրորդ թղթի միջև Ա պարբերությունն ընկած հատվածը հունարենում չկա, ահա այսպիսի տեսք ունի

հունարեն և հայերեն բնագրերի նույնական հատվածների սկզբնամասը.

Բնագիր

Թարգմանություն

«Πολὺν ὄντων τῶν ὅτι τῆς θείας ἐκείνου
στον ἰσχυρὸς ὁλοκληρώσαν...» (էջ 52);

«Բազմաց եկելոց յաստուածային
Գրոց յայտնեցելոց...» (էջ 189ա):

2 Նույն թղթում կարելի է ցույց տալ հակառակ իրողության փաստեր, այսինքն հունարեն բնագրի որոշ հատվածներ օտարվել են հայերեն թարգմանությունից: Այդ բնույթի լավ օրինակ է հիշյալ ճառի վերջնամասը, ուր բացակայում է հունարեն բնագրի մի ամբողջ էջ՝ ութ կետ: Այսպիսի տեսք ունի հունարեն և հայերեն բնագրերի ավարտամասը.

Բնագիր

Թարգմանություն

«Ἐν δὲ μεγάλῃ τῷ δόξῃ δόξαται...ὡς
ἐθελονταί καὶ τελωντὶ ὁρᾷται» (էջ 56);

«Ապա եթե եւ ոչ այսպէս ուղղե-
ցի... իբրեւ զհեթանոսական կամ իբ-
րեւ զմաքսաւոր տեսանել» (էջ 191բ):

3 Համեմատվող բնագրերում կան մեկ այսպես կոչված խմբագրական բնույթի տարբերություններ: Երբեմն հունարենում առանձին կետերի տեսքով ներկայացվող այս կամ այն հանձնարարականը հայերեն թարգմանությունում վերածվել է մեկ ընդհանուր բացատրության: Այսպես, օրինակ՝

Բնագիր

Թարգմանություն

«Ὅτι δὲ τὸν λέγοντα μετανοεῖν εἶπ' ἀμαρτάναι μὴ μόνον κατανυγῆναι ἐφ' ᾧ ἤμαρτεν, ἀλλὰ καὶ καρποῦς ἀγίου τῆς μετανοίας ποιῆσαι».

«Ὅτι ἔπει τῶς πρώτοις ἀμαρτάναι: παύσεσθαι καὶ τῆς ἀφ' ἐξουσίας ἀξιώσεσθαι, εἶναι πάλιν ἀμαρτάναι. γὰρ τὸν τῶν προτέρων κατανυγῆσαι ἐστὶν τὸ χρῆμα τῆς ὁρθότητος» (էջ 56).

«Ձի պարտ է զասացողն ապաշխարել ի վերայ մեղանացն ոչ միայն զջանալ, որով մեղան, այլ եւ պտուղս արժանաւոր ապաշխարութեան առնել, քանզի զի պարտ է, որ ի վերայ առաջին մեղանաց խրատեցաւ եւ թողութեան արժանի եղել, եթե դարձեալ մեղիցե՛ ի վերայ առաջնոյն կազմէ ինքեան զդատաստանն սրտմտութեան» (էջ 191բ):

Հրապարակվող թղթերը հրատարակության պատրաստելիս համեմատության համար ընտրել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերը. ձեռ. № 822—A («Բարսեղ Կեսարացի, Պահոց գիրք», 1285 թ.), ձեռ. № 1500—B («Ծաղրնտիր», 1283 թ.), ձեռ. № 5595—C («Բարսեղ Կեսարացի, Մատենագրութիւնք», 1279 թ.), ձեռ. № 2549—D («Ժողովածու», ԺԴդ.), ձեռ. № 486—E («Ժողովածու», 1790 թ.), ձեռ. № 659—W («Կանոնագիրք հայոց», 1368 թ.):

181բ

// ԲԱՍԻՂԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ՝ ԵԻՍԵԲՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

- Յորժամ առ իրսն հայիմք եւ զդժուարութիւնս տեսանեմք, յորոց ամենայն բարոյն ներգործութիւն իբրեւ ի կապանաց իմեք՝ խափանեալ արգելանի, ի բաց հրաժարումն ինքեանց զամբ ամենեւին: Իսկ
- 5 յորժամ դարձեալ տեսանեմք զքո պարկեշտ վայելչութիւնդ եւ զմտաւածեմք, զի զքեզ բժիշկ ի յեկեղեցիս հիւանդութեանց Տէրն մեր շտեմարանեաց, վերստին առնումք զմեր խորհուրդս եւ ըստ ի բաց ծանաւթութեան անկմանն՝ յուսով բարեաց կանգնիմք: Լուծաւ ամենայն եկեղեցի՝ որպէս եւ ոչ քո իմաստութիւնդ անգիտանայ եւ տեսանես
- 182ա ամենեւին յիրաքանչիւրումն, // իբրեւ ի բարձրաւանդակ իմեքէ դիտուանցէ մտաւք տեսութեան: Զիարդ իբրեւ ի խորոջ բազմաց ի միասին նստեցելոց ի բոնութենէ պիտեցն ամենեքեան սու իրեարս պատառին եւ լինի նաւաբեկութիւնն՝ երբեմն յարտաքնոց պատճառաց բռնաբար շարժելով զծովն, եւ երբեմն ի նաւացն խռովութենէ հակառակ
- 15 ելանելով իրերաց եւ մղելով: Բաւական է ի կերպարանիս թողով զբանս զի եւ ոչ քո իմաստութեանդ խնդրելով ինչ յոլովագոյն եւ ոչ ի բացս կացելոյս յորդորելով զմեր համարձակութիւն: Եւ առ այսոսիկ կերպարանաւ նաւուղիդ ոք, հաւատարիմ յարուցանելով զՏէրն սաստել հողմոյն եւ ծովում: Ո՛ր այլ ոք, թէ ոչ, որ ի մանկութենէդ սպա-
- 20 սաւոր բարեպաշտութեան հանդիսացար ի նահատակութիւնս:
- Արդ՝ վասն զի դիմեցին այժմ հարազատաբար խորք շուրջ զմեք առողջութեամբ ըստ հաւատոյն առ համափառս հաւասարութիւնն եւ զմիաւորութիւն: Համարձակելով եկաք ի մաղթանս քո՝ անըստչարելի առաքել ամենեցուն մեզ թուղթ մի, որ ունիցի ի յորդորումն գործելե-
- 25 ացն, քանզի, այսպէս կամիմ առ ի քէն զսկիզբնն գոլ նոցա ինքեանց հաւասարութեանց բանից, վասն զի յորս կարծեն՝ երեւին քեզ յիշատակաւ անցելոցն // զայն արա աստուածասէր Հայր ինձ: Առ եպիսկոպոս թուղթս առաքեսցես կամ ի ձեռն ուրուք, որք այտուստ հաւատարիմք եւ կամ ի ձեռն Թէոդորոս սարկաւագակցի մերոյ, զորս ընդու-
- 182բ ցնելով ոչ յառաջագոյն տաց, թէ ոչ առնելով ի նոցանէ զպատասխանիս: Եւ եթէ ոչ յանցաւոր եղէց առ քեզ առաջի քո զամենայն աւուրս կենաց իմոց, զի ամենեւին ոչ յոլով արժանաւոր բանի ի սկզբան ասելով առ Հայր, զի եւ ինձ այժմ առ քեզ հոգեւոր հայր ասել: Իսկ եթէ այս ամենայն արիւնակաւ հրաժարեաց ի քէն, այլ մեզ ի պաշտու-

- | | | | |
|-------|---|-------|---|
| 1 | Բասիղիոս] նորին B, Բասիլի D, Բասիլիոս E | 17 | կացելոց ACE |
| | Ե Եպիսկոպոս] B Եպիսկոպոսի D, Եսեբիա B | 18 | յարուցանել E |
| 2 | զդժուարութիւնս B | 19-20 | սպասաւորէ C |
| 3 | բարոյն A ներգործութիւնք E | 20 | նահատակութիւնն B |
| 5 | վայկութիւն ABCE | 21 | զմեօք DE |
| 7 | ևւ] B | 22 | հաւատոցն E համափառսն B |
| 7-8 | ծանաւթութեանն B | 23 | անըստչարելի] անզչարելի E |
| 8 | բարեացն E | 24 | ամենեցուն] E. յորդորումնդ C |
| 10 | բարձրաւանդակ A, բարձրաւանդակէ E | 25 | զսկիզբն B |
| 11-22 | միասին] մասին B | 27 | առ ի ասէ B |
| 13 | յարտաքնոցն պատճառանաց B | 27-28 | Եպիսկոպոս D |
| 15 | է ի] էր C | 28 | յայդուստ E |
| 16 | իմաստութիւնդ D ինչ] ինձ E | 29 | Դէոդորոս A, Դորոթա B, Դորոթայ CE սարկաւագակցի C |

ման պատճառս թողացոյ անհնգաբար եւ առանց խորելոյ: Բաղձանք խաղաղութեան եւ առ միմեանս մեր միատրութիւն զնոյն իմանողացն առ Տէրն ի հրեշտակագնացութիւնս յայս հասանկով:

182բ //ԹՈՒՂԹ ԱՌՒ ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍ
5 ՆԱԶԻԱԶՈՒ՝ ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՑ

Ծանկայ զքո՞ թուղթն, զոր արինակ որք զբարեկամացն մանկունս յերեմանէ: Առցա մամնութեան առ կենդանիսն ճանաչեն: Քանզի ոչ մեծ լինել, ասացեր, գտեղոյն, կազմութիւն առ առնել իմն դիմումն անձին քում յառ ընդ մեզ կեանսն յառաջ, քան թէ յաղագս բարոց ինչ ու//սցիս կարգաց, քո էր ճշմարտութեամբ իմացուածս այս եւ քոյին անձին՝ զամենայն յոչնչի եղողի, իսկ զխոստմունսն մեզ համբարեալս երանութիւնս: Ես ինքն զոր ինչ միանգամ առնեմ, ի վերջնումս զայսոսիկ, ի գիշերի եւ ի տուէ, գրել ամաչեմ: Քանզի թողի զքաղաքայինսն կրթարանս իբրեւ զբիրոց չարեաց պատճառս, 15 իսկ զիս ինքն չեւ եւս կարացեալ ի բաց թողուլ: Այլ մամնապէս եմ որոց ի ծովու ի մատրդութեանէ անփորձութեան կորուսեցելոցն եւ ալեկոծին, որք մեծութեամբ մասին դժուարանան, որպէս բազում տուողի, շարժումն, եւ անդի ի մտակն փոփոխելով ամենայն ուրեք մտեն, եւ յամենայնի վարանին, եւ յարեցեալ լինի ի մոսա մողկտումն, եւ 20 մաղձ: Այսպիսի իմն եւ մերս: Զի գտնական զախտսն ընդ մեզ շուրջ բերելով ամենայն ուրեք ընդ մամնապէս վրդովմունսն եմք, որպէս թէ ոչինչ անապատութեամբս սուտեցաք զայսոսիկ: Քան զո՞ր միանգամ, առնել պարտ էր եւ ուստի՞ սկսանել մեզ՝ բուռն հարկանել զհետոյ առաջնորդին առ փրկութիւն: «Եթէ ոք, ասէ, կամեսցի զկնի իմ գալ՝ ուրասցի զինքն եւ աոցէ զխաչ իւր՝ եւ եկեսցէ զհետ իմ»*, 183բ այսինքն է ի հանդարտութեան: Զմիտսն ունել փորձ վայել է: // Քանզի, որպէս ակն շրջածութեամբ խտաբար եւ երբեմն զառ ի կողմն զառածեալ եւ դարձեալ վեր ի վայրն փոխաբերեալ տեսանել յայտնաբար զառաջիկայն ոչ կարէ յաղագս ոչ հաստատելոյ զդէմս տեսմանն, եթէ 30 հանդերձեալ իցէ լուսաւոր առնել զտեսուածս: Այսպէս եւ միտք մարդոյ՝ բիրութ քստ աշխարհայնոցս հոգովք ձգեցեալք, անկարելի է

* Մատթ. ԺԶ, 24:

- | | |
|---|-------------------------|
| 1 քաղձանս Լ3 | 14 զքաղաքինսն C |
| 2 իմանողացս B | 15 մամնապէս] մման պէս C |
| 4 թուղթ] նորին թուղթ B, սրբոյն Բարսդի եպիսկոպոսի թուղթ DE | 17 դժարանան B |
| 5 վարուց]+օգնեալ ինձ Քրիստոս E | 17-18 առդլս B |
| 6 որք] E | 18 մատրկն B, մտակնն C |
| 8 գտեղոյն E առնել իմն] առնելիսն ACDE | 19 յարեցեալ] յարուցել B |
| 10 իմացուածս B | 20 ախասն BE |
| 11 յանձին E զխոստմունս D | 22 սուքտեցաք B |
| 12 համբարըստ E երանութեանս E անկամ տոնի B | 24 կամի B |
| 13 տուէ] ստէ B | 26 փորձել BD |
| | 27 կողմն] կողմ B |
| | 28 վեր] վայր E |
| | 29 զառաջիկայսն D |
| | 30 զտեսածս B |
| | 31 ձգեալք E |

- յայտնաբար տեսանել ճշմարտութեամբ: Այլ զոմն չեւ եւս կապանաւ ամուսնութեանն զուգեցեալ դժընդակագոյն ցանկութիւնք եւ յարձակմունք դժուարարգելք, եւ տոփանք ոմանք դժուարատոփական խոռվեցուցանեն: Իսկ զահա հասեալն ամուսնութեամբ այլ իմն վրդովումն
- 5 հոգոց սպանանէ, յանորդութեան որդոց ցանկութիւնք, եւ յստացման մանկանց՝ մանկասնութեան հոգք, կնոջ պահպանութիւն, տանն խնամակալութիւն, ծառայիցն պատրաստութիւն, որք ըստ պատահման վնասք, որք առ դրացիս միմեանս անկութիւնք, որք յատեանսն շարժմունք, վաճառաշահութեան վտանգք, երկրագործութեան աշխատութիւնք: Ամենայն ար յատուկ գայ՝ բերելով անձին խաւարումն:
- 10 Գիշերք՝ զտուրջեցեանկան հոգսն փոխադր//եալք, ի նոյն յերեւոյթսն, խաբեն զմիտսն: Իսկ այսոցիկ մի է փախուստ՝ որոշումն յաշխարհայնոցս ամենեցունց: Եւ յաշխարհէ գնացումն՝ ոչ արտաքոյ սորա լինել մարմնապէս, այլ վշտակցութեամբ առ մարմին զանձնն դարձուցանել՝
- 15 անքաղաք, անտուն, անհինչ, անկերասէր, անստացուածս, վարս անիրականս, անփոփոխելիս, անուսումն մարդկայնոց վարդապետութեանց՝ պատրաստ առ ընդունել սրտի զաստուածայնոցն վարդապետութեանցն ներեղեալս տպաւորութիւնս: Իսկ պատրաստութիւն սրտի է ուրացութիւն ի չար վարդապետութեանցն յառաջ ունո-
- 20 ղաց զնա խրատուց: Քանզի եւ ոչ ի մոմ զրել կարողութիւն է եւ ոչ յառաջ ջնջեցելոց ներկայացելոց կերպարանացն, եւ ոչ անձին աստուածային վարդապետութիւնս աւանդել՝ եթէ ոչ նախ զսովորութեանց ուսմունս նորա ի բաց հանցէ: Իսկ առ այսոսիկ մեծ աւգուտ մեզ անպատանալն մատուցանէ, հանդարտեցուցանէ զմեր ախտս եւ պա-
- 25 րապումն տուեալ բանիս ամենեւին զնոսա յանձնէ հատանէ: Քանզի, որպէս զազանք դիւրակոռելիք են, ցրտացեալք, այսպէս ե՛ւ ցանկութիւնք, ե՛ւ յարձակմունք, ե՛ւ տրտմութիւնք, ե՛ւ երկիւղք զժանտարկութեանն ի չարիսն, դադարեցուցանեն հանդարտութեամբն եւ ոչ վայ-
- 184բ րենացեալք անհատութեամբ զայրացմանն, // դիւրաւ ճգնողականք
- 30 զարութեամբ բանին լինին: Եղիցի այսուհետեւ վայրն այսպիսի՝ որպէս եւ մերս՝ ի խառնից մարդկանէ վճարեալ՝ որպէս զի ոչ ի միոջէ յարտաքնոցն խուճապից զվարսն հատանել: Իսկ ճգնողութիւն քարեպաշտութեանն զհոգին դարմանէ աստուածային իմացուածովք: Զի զի՞նչ երանողական է, քան թէ հրեշտակական դասուց յերկրի մմանել,

- | | | |
|-----|---------------------------------------|------------------------------------|
| 3 | դժուարարգելիք B, դժուար արգելիք 17-18 | պատրաստ... վարդապետութեանցն] E |
| | E 'առփանք] կոփանք B դժուարս- | 20 ի մոմ] իմում BE |
| | տրտմանք B | 21 ջնջելոց C, ջնջեցելոյ E |
| 3-4 | խոռվեցուցանել C | կերպարանացն] կերպասացն ADE |
| 4 | զահա հասեալն] շահահասեալն E | 23 հանիցէ B այսոցիկ B |
| 5 | յանորդութեան] B որդոց B ցանկու- | 27 երկիւղք B երկեղք D |
| | թիւն B | 27-28 ժանկարկողք անձին B, զժանդար- |
| 7-8 | պատահմանն D | կողք C, զժանգարկոյքն D |
| 8 | անկութիւնք] մանկութիւնքն B յատե- | 28 ի] B զչարիսն B |
| | նքս B | 29 անհատութեամբ] անհատատութեամբ D |
| 11 | զտուրջեցեանկան A, զտուրջեցեանկան B | 30 այսուհետեւ] այնուհետեւ BD |
| | հոգքն D | 32-33 քարեպաշտութեան |
| 15 | անկերասէր] ընկերասէր B անստաց- | 33 զոգին B իմացուածովք B, իմացու- |
| | ւածս B, անստացուած E | ծօք E |
| 16 | անփոփոխելի D | 34 հրեշտակական դասուն B երկրի E |

- անդէն իսկ սկսեցելոյ ատուրն արագ արագ յաղաթս դիմեցեալ եւ արհմութեամբք, եւ երգովք՝ զստացողն պատուել, իսկ սալա արեգական սրբաբար պայծառացելոյ ի գործ դարձեալ ամենայն ուրեք նոցունց աղաթից մերձ կսցելոց եւ արհմութեամբք իբրեւ աղի հա-
- 5 մեմեալ զգործաւորութիւնսն: Քանզի զուարթ եւ անտրտում անձին հանդարտութիւն արհմութեանցն մխիթարութիւնք շնորհեն: Իսկ հանդարտութիւն սկիզբն մաքրութեան անձին է. ոչ լեզուի խաւսեցելոյ զմարդկայնոցն եւ ոչ աչաց գեղեցկագունութեամբ մարմնոց եւ պատշաճողութեամբ խաւարեցելոց, եւ ոչ լսելեաց զոլորումն ոգւոյ լուծեալ
- 10 լսականաց անդամոց առ հեշտութիւն արարելոց, եւ ոչ բանիւք խեղկատակութեանց եւ ծաղուց մարդկայնոց, որ առաւելն լուծանել զպնդութիւն ոգւոց սովորեաց: Քանզի միտք ոչ ցրուեալք յարտաքին-
- 185 աւրն եւ ոչ ի զգաստ//ութեանց յաշխարհ ցնդեալ՝ ի վեր ինքն դառնայ եւ ինքեամբ յառ Աստուծոյ իմացուածսն վերանայ: Եւ այնու գեղեց-
- 15 կութեամբ շուրջ պայծառացեալ եւ նորին իսկ բնութեանն մոռացումն առնու՝ ոչ առ կերակրոյն հոգ զանձն ձգեցեալ, այլ զամենայն իւր զփոյթն լընտրութիւն յաիտենական բարութեանցն փոխադրեալ, թէ զհարդ ուղղեսցի նմա պարկեշտութիւնն եւ իմաստութիւնն, եւ արութիւնն կամ որպէս՝ արդարութիւնն, եւ այլք առաքինութիւնք: Որչափ
- 20 յազգականութիւնսն յայտսիկ բաժանեալք արժանատրաբար զիրաքանչիւր կատարել յորդորեն փութացելոյն:
- Եւ մեծ ճանապարհ առ արժանատրն զիւտ ընթերցուածք Աստուածաշունչք, ուր եւ գործոցն արիւնակք գտանին եւ վարք երանելեաց արանց՝ վերադրեալք յանձնեցելոցն՝ որպէս կանոնք իմն շնչականք
- 25 քաղաքավարութեանն մմանութեամբք ըստ Աստծոյ գործոց առաջի կան: Եւ մանաւանդ որպէս թէ իւրաքանչիւր ոք կարատաբար ունելով ինքեան զգայ, նովաւ կրթեսցի, որպէս յումեմնէ ի հասարակաց բժշկարանէ, զառ պատշաճաբարն գտցէ զհիւանդացելոյն զդեղ: Զի որ տոփող պարկեշտութեանն է զյաղագս Յովսէփայ պատմութիւնն
- 185բ անհատաբար ընտրեսցէ եւ ի նմանէ զպարկեշտականն ուսցի // գործ՝ գտանելով ոչ միայն ժուժկալութեամբ զնա առ հեշտութիւնն ունողի, այլ եւ համբերութեամբ յառաքինութիւնն հաստատեցելոյ: Եւ առ արութիւն խրատեսցի ի Յովքայ, որ ոչ միայն առ ընդդիմութիւն կենաց փոխեցելոյ նմա աղքատ ի մեծատանէ եւ անորդի ի բարիորդութենէ
- 35 ի միում վայրկեան ժամանակի եղեալ, եկաց մնաց նոյն ինքն անշարժ ամենայն ուրեք զանձինն խորհուրդս ողջ պահելով եւ բարեկամացն ի մխիթարութիւն եկելոցն եւ ի վերայ ելելոցն, եւ ձգելոց նմա զցա-

- | | |
|------------------------------------|-------------------------------------|
| 1 անդէն] անդ եւ B սկսեցելոց B | 20 յաղգական B |
| 4 մերձ կսցելոց] մերձեցելոց C | 24 վերայ գրուալք D յանձնեցելոց E |
| 6 մխիթարութիւն B | 25 նմանութեամբ B գործոցն B |
| 7 սկիսքն B խօսելո B | 26 կարատաբար] հարցս տարար D |
| 9 խաւարեցելոց] խօսեցելոց B ոգոց E | 28 զհիւանդացելո B, զհիւանդացելոցն E |
| 10 բանի A | 29 Յուսէփա B |
| 11 ծաղու B մարդկայնոց BE լուծանէ E | 32 հաստատեցելոյ D, հաստատեցելոց E |
| 12 ոգոց B ցրուեալք] ցիւելք B | 32-33 արութիւնն B |
| 13 սգաստութեամբ B ցնդեալ] B | 33 Յօբայ E |
| 14 եւ] C, + ոչ B իմացուածսն B | 36 զբարեկամացն E |
| 16 կերակրոցն C | 37 ձգելոցն E նմա] մեզ E |
| 19 այլ B | |

ուսանան ոչ զայրացաւ: Դարձեալ գիտելով զհարդ հեզ միանգամայն եւ մեծ անձն լիցի, որպէս զի ցաւմամբ առ մեղսն վարեցի, իսկ զգաւնութեամբ առ մարդիկ, գտցէ այնունետեւ արի՝ ըստ Աստուծոյ բարեգործութեանց, հեզ եւ անշարժ՝ յառ թշնամեացն փոխատրութիւնս:

5 ըս: Այսպիսի էր եւ Մովսէս, որ մեծաւ սրտմտութեամբ յառ Աստուած մեղուցելոցն ի վերայ յարուցեալ, իսկ հանդարտութեամբ անձին զլստինքեան չարախաւութիւնսն բերելով: Եւ ամենայն ուրեք, որպէս կենդանագիրք, յորժամ պատկեր գրիցեն խստագոյն առ սարինակն հայեցեալ, զանտի կերպարանն՝ առ իրեանցն փութացեալ:

10 փոփոխել արուեստասիրութիւն: Այսպէս պարտ է եւ զփութացեալսն ամենեցուն մասանցն առաքինութեան բացագործել կատար//եալ, որպէս առ ստեղծական իմն շարժեցեալ եւ գործական՝ ի վառս սրբոցն հայեցեալ, զնոցաւ բարին ընտանի առնել նմանութեամբ:

Աղաւթն դարձեալ զընթերցումսն փոփոխեալք նորագոյն զան-
 15 ձըն եւ ամբագոյն առ աստուածային ցանկութեամբք շարժեցեալ մերձ առնուին: Իսկ սղաւթք բարիք ներգործական արարեալ զԱստուծոյ իմացումսն անձին: Եւ այս է բնականութիւնն Աստուծոյ յիշատակաւն հաստատեալ ունել յինքեան զԱստուած: Այսպէս լինիմք տաճար Աստուծոյ, յորժամ ոչ հոգովք երկրաւորացս զխտութիւն յիշատակին

20 կատարեցուք, ոչ անկարծական ախտիւն միտքն խռովեցին, այլ յամենայնէ փախչելով աստուածասէրն առ Աստուած գնացէ, եւ խտորելով, որք յառաջ կոչեն զնա ի չարիսն, առ որս մերձեցուցանեն զնա յառաքինութեանն գործս կրթեցին:

Եւ յառաջ քան զամենայն փութալ, պարտ է զբանին պէտս ոչ
 25 անուսումնաբար ունել, այլ հարցաքննել առանց հակառակութեան, իսկ պատասխանի առնել պատուասիրաբար, ոչ ընդ մէջ հատանել զուսացողն յորժամ ինչ պիտանացու ասէ եւ ոչ ցանկալ զիր զբանն ցուցականապէս առաջի արկանել, չափ որոշեալ բանի եւ լսելոյ, ուսանել անամաւթաբար եւ ուսուցանել աննախանձապէս եւ, զոր ինչ
 180բ լընկերէ ուսեալ, ոչ ծածկել՝ որպէս յոռէգոյնք կանանցն //որք զխորթսրն առաջի արկանեն, այլ քարոզել լաւաբարոյութեամբ զհայրն բանի: Իսկ ոլորումն ձայնի միջինն պատուեսցի որպէս թէ ոչ փախչել ի լսելեացն ի նուաղութեանն եւ մի ծանրական լինել մեծութեամբ բացատրութեանն: Յառաջագոյն քննել ինքեամբ զասելն եւ այսպէս յայտ-
 35 նել զբանն: Բարիասաց ի պատահմունս եւ քաղցր՝ ի խաւսս. ոչ շռայլութեամբ զհեշտալին որսացեալ, այլ քաղցրական մխիթարութեամբ զցածութիւնն ունել: Քանզի արկանելով զինքն խոնարհութեամբ այսպէս դիրքնկալ եղիցի կարատացելոյն թշկութեան: Եւ բազում ան-

3 զգաւնութեամբ] զգաւնութեամբ
 4 այնուհետեւ] այսուհետեւ C
 4 բարեգործութեանցն B
 5 Մովսէս B
 7 յստ ինքն B
 9 զանգի B
 10 փոփոխեալք D արեւաստիրութիւն B
 11 առաքինութեանն E
 13 առնելով E
 14 զընթերցածսն B
 15 ցանկութեան B

C 16 առնոյն B, առնուն E
 17 իմացումսն B
 19 զխտութիւնն D
 21 փաղչելով B
 30 լընկերէն B յոռէգոյնք D, յոռագոյնք E
 կանանց E
 31-32 բանի] բարի E
 32 պատուեսցի E
 35 բարիասաց] բարեկամաց B, բարի ասացեալ E
 36 կարօտացելոցն թշկութիւն B

գամ պիտանացու մեզ եւ մարգարէին կարգ զարմանալեացն, որ Դաւթայ մեղուցելոյ ոչ ի նմանէ իսկ ի Վարայ Էաժ զսահման դատապարտութեանն, այլ առաջարկութեամբ դիմաց վարեցեալ զնոյն ինքն նըստոյց իւրոց մեղացն դատաւոր, որպէս, զնա իսկ ըստինքեան առաջի 5 քերելով զդատաստանն, կամ թէ ոչ եւս մեղադրել գյանդիմանիչսն:

Բայց զհետ գայ խոնարհին եւ վայրակնեցելոյ խորհրդոյն ակն տրտում յերկիր քթթող, ձեւ՝ խնամակալական, վարսք՝ տխուրք, զգեստք՝ աղսւղեալ, որպէս թէ զոր լսոնն սզացողքն ըստ պատշաճողութեան զայսուսիկ մեզ ինքնակամութեանէ: Ի վերայ քերեալ հանդերձն զատեալ, // յարեցեալ ի մարմինն, իսկ պնդութիւնն մի ի վեր քան զքաշսն (վասն զի կանանցական է), եւ մի թոյլ առաւել, որպէս թէ ի վայր անկանել հանդերձին, քանզի անպնդակազմութեան է: Եւ զնացք մի թոյլ, որպէս զի լուծումն անձին դատախազ իցէ, եւ մի առաւել ընդողնացեալ, որպէս զի զարդարական զայսուսիկ յարձակ- 15 մունս երեւցուցանեն: Եւ հայցումն հանդերձից՝ առ ձմեռն եւ ամառն քաւական: Ոչ գումով զպայծառագոյնն խնդրել եւ ոչ կազմութեամբ զքարակն եւ զկակուղն: Քանզի առ քաղաքական գեղեցկութիւնս շուրջ տեսանել զոյգ կանացին զարդու, զոր նոքա իմանան ատար ծաղկաւ զճնաւոս եւ զհերս իւրեանց գունելով: Այլ եւ թանձրութեամբ հանդերձոցն այնպէս պարտ է, որպէս զի մի կարատանալ երկրորդի առ ի ջեռուցանել զգեցողն: Իսկ առ ոտից զանպաճոյնն ըստ արժանաւորութեանն, անկարատաքար զպէտսն լցուցեալ եւ միանգամայն պարզաքար՝ որպէս ի զգեստին կարծել վայել է զպիտանացուն, այսպէս եւ ի կերակուրսն՝ հաց լցցէ զպէտսն եւ ջուր բժշկեսցէ զճարս- 25 ւումն առողջին եւ որ ինչ միանգամ ի սերմանց առ եկել զգարութիւն մարմնոյ կարէ ողջ պահել: Իսկ ուտել ոչ սովածաքար որովայնամութիւն ի վերայ քերելով, այլ ամենայն // ուրեք զկշիռն եւ զհեզ, եւ զառ հեշտութիւնն անժուժկալ ողջ պահողի: Եւ ոչ զանժամ դատարկ զմիտսն յաղագս սո Աստուած իմացուածոցն ունելով, այլ զնոյն ինքն 20 քն զկերակրոցն բնութիւն, զընդունողի մարմնոյն կազմութիւն, պատճառս առնել փառաբանութեան, թէ՛ զի՛արդ զանազանք կերակրոց յատկականաց մարմնոցն պատշաճեալք յամենեցուն տնսորինէն իմացեալք եղեն: Աղաւթք յառաջ, քան զկերակուրսն արժանաւորք լինել Աստուծոյ տրիցն, որոց այժմն տայ եւ որոց առ հանդերձեալսն համ- 35 քարեաց: Աղաւթք զկնի կերակրոյ շնորհակալութեան տուեցելոյց լցու-

1 պիտանացու] + բժշկութիւն B

2 մեղուցելոյն B իսկ] D

իսկ] D

6 վայր անկեցելոց խորհրդոցն E

8 սզեսար B ազակեղք B

9 բերեալ] երեւել B

11 զքաշսն] զքաշսն E կանանցական BC

12 անպնդակազմութիւն է D, անպնդակազմութեան է E

13 զի] B զլուծումն B

14 ընդողնացեալ] ընդունող ղնացեալ

ACDE

18 կանանցին B

19 թանձրութիւն

19-20 հանդերձիցն BD

21 զողիցողն B օղոց D ոտից] D, ոտիցն B

22 լցուցեալ] ցուցանեալ C, ցուցանել D

23 ի] D սզեսարին B

24 բժշկէ B

27 բերելով] ածելով E

28 հեշտութիւն B, հեշտութիւնսն E ժուժկալ E յայնժամ C

30 զկերակրոյն E

31 փառաբանութեանն B

35 կերակրոց ԵԷ շնորհակալութիւն BD

տուցելոյ B, առեցելոյ D

ցողք, եւ խնդիր՝ խոստացելոցն: Ժամ մի կերակրոցն կարգեալ հոյ՝
 ինքն ըստ շրջագայութեան, որպէս թէ ի քսան եւ ի չորից ժամուոց
 արագիշերոյն մի լինել հազիւ առ ծախումն մարմնականին: Իսկ
 զայլսն յետ ստացն ներգործութեան պարսպ եւ ճգնաւորին, եւ քունք
 5 թէթեւք, եւ դիրաւիւնիւնք՝ բնականաբար հետեւեալք չափաւոր կե-
 րակրոյն, ըստ կազմութեան յաղագս մեծացն հոգոց ի բաց հատկաւք:
 Քանզի խոր սրբեցութեամբ լուծեցելոցն նորա անդամոցն որպէս թէ
 պարապումն անտեղեաց երեսութիցն տալ յառ հանապազորդ մասն
 189ա զայս/պէս մեջեցեալսս: Այս ճգնաւորացն բարեպաշտութեան միջա-
 10 գիշերն եւ առաւել զի պարապումն անձինն գիշերականն հանդարտու-
 թիւն շնորհէ, ոչ աչաց եւ ոչ լսելեաց վնասակար լսմունս կամ տե-
 սիլս ի սիրտն առաքելոց, այլ միայնոյ առանձնացելոյ մտացն եւ
 յԱստուած յարեցելոյ, եւ ուղղեցելոյ զինքն յիշատակաւք մեղանացն,
 եւ սահմանս ընքեան եղողի առ ի խոտորումն չարութեանն, եւ զառ
 15 ի յԱստուած գործակցութիւնն ի կատարումն փութացելոցն խնդրողի:

189ա // ԹՈՒՂԹ ԱՌՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍ
 ՆԱԶԻԱԶՈՒ՝ ՅԱՂԱԳՍ ԿՐԱԽՆԱԽՈՐԱԿԱՆ ՎԱՐՈՒՑ

Եւ գրելով եւ լուծ լինելով հաստատեալ ունիմք ի սիրտս մեր պա-
 րեւ զյիշատակ քո բարեգարդութեանդ, եւ աղաթս առ Տէր՝ տալ քեզ
 20 կատարել զընթացս բարոյ քաղաքաւարութեանն, որպէս ընտրեցեր,
 քանզի ճշմարտութեամբ ոչ փոքր է հանդէսն խոստովանեալ աւե-
 տեաւքն ըստ կարգի ի վերայ ածել: Քանզի, ըստ Աւետարանին, քա-
 189բ դ/աքաւարութիւն ամենեցուն է, իսկ մի ի փոքրագոյնսն ածել զպահ-
 պանութիւնն եւ ոչինչ ի գրեցելոցն թերատեսեալ: Այլ յոյժ սակաւուց
 25 ոմանց ի մեր գիտութիւն եկելոց ուղղեալ՝ որպէս թէ եւ լեզուաւ խրա-
 տեցելով վարել ըստ կամաց Աւետարանին եւ ձեռաց ներգործել ըստ
 դիտաւորութեան հաճոյիցն Աստուծոյ: Եւ զոտս շարժել, եւ իւրաքան-
 չիրովք անդամովքն այսպէս վարեցեալ՝ որպէս ի սկզբանէ արարիչն մեր

- | | |
|---|-------------------------------------|
| 1 [ցուցողք] ցուցողք B խոստացելոց B 16-17 | Թուղթ սրբոյն Բարսղի W |
| 3 մարմնականին] մարմնակին C | 17 կրօնաւորութեան E վարուց] E |
| 4 պարապ] BCE եւ՝] BCE | 18 մեր] D պահեալ D |
| 5 հօտենելք B | 19 աղաթել W քեզ] D |
| 5-6 կերակրոցն E | 20 զընթացսն W՝ րարո B ընտրեցէրն W |
| 6 հոգո B, հոգւոց D | 22 վերայ] վեր W քանզի] + ընտրեալ W |
| 7 խորին BCD լուծեցելոց B, լուծելոցն 22-23 | քաղաքավարութեան B |
| C, լուծեցելոց E անդամոց B | 23 փոքրագոյնն W |
| 8 առ B մասն] մահն ABD | 23-24 զպահպանութիւն E |
| 9 ննչելսն B, ննչեցեալս E | 24 ի] ABCD, + ահա W գրեցելոյն E |
| 10 գիշերական հանդարտութիւնն B | այլ] այս ABC |
| 12 միայն B, միայնոյ C | 25 ուղղել W, լեզւօ B, լեզուք W |
| 13 յարեցելոց BE ուղղեցելոց E | 26 վարեալ W, + եւ ահամբ դաստիարա- |
| 14 ընթեան] ինքն B, ինքեան DE | կեցելով վարել ABCD |
| 15 աստուծոյ E | 27 զոտս] զորս W |
| 16 Թուղթ] նորին Թուղթ B, նորին սրբոյն 27 | 28 իւրաքանչիւրովքն B, իւրովքն D, ի- |
| Բարսղի հպիսկոպոսի Թուղթ E | րաքանչիւր W |
| | 28 անդամօքն BE, անդամօքն W |

- տնարինեաց: Իսկ զգեստս պաճուճողս, այսինքն է ի պատահմունս արանց պահեցեալ ի կերակուրս բաւականութեամբ եւ լըստացուածսն հարկաւորացն անաւելաստացութեամբ: Այսք ամենեքին փոքունք պարզաբար այսպէս ասացեալք, բայց մեծ ի հանդիսի ուղղել պիտա-
- 5 ցացու ի վերայ նորին իսկ ճշմարտութեանն գտաք: Եւ եւս առ այսոքիք ի խոնարհութեան կատարեալք՝ որպէս թէ ոչ զնախարարացն պայծառութիւն յիշել եւ ոչինչ միանգամ մեզ գոյանայ ի բնութենէն աւելաստացութիւնն կամ ըստ մարմնոյ եւ կամ ըստ անձին այսուիկ, պանծանալ, եւ ոչ արտաբնովքն մերովք կարծեալք պատճառս աւ-
- 10 վարտուածութեան, եւ փքանաց առնել: Այսոքիկ հրեշտակակամ եւ վարուց զառ ի ծովակալութիւնն պնդակազմ եւ յաղ/ալթս աշխատու-
- 189 աւեր, եղբայրսիրութեամբ վշտակից, եւ առ կարատս հաղորդականք, եւ զկամս ի ներքոյ դնել: Խոնարհութիւն սրտի եւ առողջութիւն հաւատոց, եւ ի զգաստութիւն հարթ, մի՛ երբէք իմացուածոցն նուազեցելոց,
- 15 ահագին եւ դժուարախրատելի դատաստանին առ, որ փութամբն ամենեքին, բայց յիշելն զնա, եւ զառ ի նմանէ ելսն սակաւք ոմանք ճգնին:

Բազմաց եղելոց յաստուածային Գրոց յայտնեցելոց, որք ուղղել պարտին ի փութացելոցն հաճոյանալ Աստուծոյ, բայց միայն յաղագս

20 այսոցիկ, որ մերձակայիս շարժեցան առ ի մէնջ, որպէս եւ ուսայ ի նոցունց յԱստուածաշունչ Գրոց, համառատութեամբ յիշատակաւ ասել հարկաւորապէս խաւսեցայ, յաղագս իւրաքանչիւրոյ վկայութիւնն դիւրագիտ եղեսու ի բաց թողի, գիտել այնոցիկ, որք ընթերցուածոցն եւ պարապեալք:

- 25 Ձի պարտ է քրիստոնէին՝ արժանի ըստ երկնային կոչմանն խորհել եւ արժանապէս ըստ Աւետարանին Քրիստոսի քաղաքավարել:

Ձի ոչ է պարտ քրիստոնէին՝ զբաւսանալ եւ ոչ ի բաց թողուլ ի մտաց գլխումնն Աստուծոյ, եւ զկամս նորա, եւ զդատաստանն Աստուծոյ:

- 30 Ձի պարտ է քրիստոնէին՝ վերագոյն ըստ արինացն արդարութեանց եղեալ յամենայնի, ոչ երդնուլ պարտ է եւ ոչ ստել:
- 189բ Ձի ոչ է պարտ // հայհոյել եւ ոչ թշնամանել: Ձի ոչ է պարտ ~

- | | | |
|-------|--------------------------------------|-----------------------------------|
| 1 | խկ] + Ի EW սղեստս B ախինքն] այս | W Կրէթ] + մեղ W իմացածոցն նաւ- |
| | E լ] W պատահմունս] պահպանու- | զեցելոց B նուազեցելոցս W |
| | մբն E | 15 զժուարախրատելի] զժվար ատելի B |
| 2 | լստացածս B, ստացուածս EW | դատաստանան W |
| 3 | իոքուն ABC | 15-16 ամենիքեան B, ամենեքեան W |
| 5 | Հշմարտութեան AC | 18 զրոց] զործ W ուղղին W |
| 5-6 | այսոքիք] այսոցիկ W | 19 պարտեալ W |
| 6 | կատարեալ W | 20 այսոցիկ] այնոցիկ DW մերձակաիս |
| 7 | զպայծառութիւն B բնութենէն BC | B, մերձակայցիս W |
| 8 | աւելաստացութեան Կ այսուիկ B | 21 նոցունց] + իսկ W |
| 9 | արտաբնութիւն E մերովք W | 22 խաւսեցայ] խորհեցայ W դյազազս W |
| | կարծեք B պատճառ W | իւրաքանչիւրոց E |
| 10 | այսոքիկ] այսոսիք W Լն] BW | 23 Եղեալս CD, որք] որ W բնութեան |
| 12 | կարատ ABCDE հաղորդական W | ծոցն B |
| 13 | Ի] W խոնարհութեամբ B | 26 արժանեորապէս B քաղաքավարիլ W |
| 13-14 | հաւատոյ EW | 28 զլիշումն B զդատաստանն ABCDE |
| 14 | զգաստութիւն] սղորութիւն B, զգաւորու- | 31 Եղելոյ W պարտ է] |
| | թիւն D, սղաւորութեան | |

կրուել է ոչ վրեժ խնդրել զիր: Զի ոչ է պարտ չար ընդ չարի հատու-
ցանել է ոչ է պարտ զայրանալ:

Զի պարտ է երկայնամտել, յամենայնի յորժամ վշտասցի, եւ
յանդիմանել բարեմտութեամբ զգրկողն, եւ ոչ ախտի իւրոյ վրեժխընդ-
5 րութեանն, այլ ցանկութեամբ ուղղութեան եղբարն ըստ պատուիրա-
նին Տեառն:

Զի ոչ է պարտ զոչ մերձակայ եղբարե խաւսել ինչ չարախա-
տութեան խորհրդով, որ արդարեւ է չարախաստութիւն, թէպէտև ճշ-
մարիտ իցէ խաւսեցեսլմ:

10 Զի պարտ իցէ ի չարախաւս եղբարե ի բաց դառնալ:

Զի ոչ է պարտ անարժանս ինչ բարբառել:

Զի ոչ է պարտ ծիծաղել եւ ոչ ծիծաղկոտացն յանձին ունել:

Զի ոչ է պարտ դատարկաբան լինել ի խաւսել ինչ, որ ոչ առ
սագուտ լսողացն իցէ եւ ոչ առ ոմն հարկաւոր պէտս եւ թողացուցեալ
15 յԱստուծոյ, որպէսզի եւ որք գործենն փութալ՝ ըստ որում կարողութիւն
է հանդարտութեամբ գործել եւ զնոյն իսկ զբարիս բանս առ այնոսիկ
շարժել առ հաւատացեալսն՝ հանդերձ փորձին ինչ տնայրիկն բան
առ շինութիւն հաւատոց՝ զի մի տրտմեացի հոգին սուրբ Աստուծոյ:

Զի ոչ է պարտ առ որս յիշխանութիւն եկելոցն մերձենալ կամ
20 խաւսել ոմանց լեղբարցն յառաջ քան թէ կարգեցեալքն յամենայն հոգս
190ա բարեկարգութեամբ փորձեցեն, թէ զիարդ հաճոյ է Աստուծոյ առ
հասարակաց սագուտն:

Զի ոչ է պարտ գինով ծառայանալ եւ յաղագս մսոյ ախտաբար
ունել եւ միանգամայն յաղագս ամենայն կերակրոց կամ ըմպելոյ հեշ-
25 տասէր լինել. քանզի որ ճգնին յամենայնի ծովկալ է:

Զի տուեցելոցն իւրաքանչիւրում ի պէտսն ոչինչ իբրեւ գիր ունել
կամ համբարել պարտ է, այլ հոգով, ամենեցուն իբրեւ տէրունակա-
նաց, միտ դնել, մի ինչ ընկեցիկ եղելոց եւ կամ անհոգացելոյն, թէ
այսպէս դիպեացի՝ թերատեսել:

30 Զի ոչ է պարտ եւ ոչ իւր ինքեան լինել ինչ, այլ իբրեւ յԱստուծոյ
աւանդեալ ի ծառայութիւն միանձանց այսպէս առնել եւ խորհել՝ գա-
մենայն զիւրաքանչիւր ոք յիւրում կարգի:

Զի ոչ է պարտ տրտմեցել եւ ոչ ի նեղութեան առ պէտսն, եւ ոչ
յաշխատութեան առ գործ, ունողաց դատաստան յաղագս իւրաքան-
35 չիւրոյ սոցա կարգեցելոյ զայսոցիկն այցելութիւն:

Զի ոչ է պարտ աղաղակ լինել եւ ոչ այլ ինչ ձեւ եւ կամ շար-

4	և] W	18	հաւատոյ E տրամիցի D սուրբ] W
5	ցանկութեամբ] յանգութեամբ E	21	զիարդ] արդարն C
5 6	պատուիրանին B	23	զինով W մտոց ACD
6	տեսնեն B, աստուծոյ W	24	ունել] ուտել B, լինել W կերակրոյ EW ըմպելոյ E
9	խաւսեցեալն] շարախաստութիւնն W	26	տեւեցելոցն B ունել] + և W
10	շարախաստ եղբարէն C, շարախստ եղբարէն D	27	համբարեալ W հոգով B
12	ծիծաղկոտացն] ծիծաղկատակացն W	28	անհոգացելոցն BE, հոգացելոցն GW
13	ի] W որ] և W	29	այսպէս] այզպէս W
14	անազուտ W իցէ] W թողացուցա- նեալ C	31	աւանզել W
15	գործեն B	34	զործն B, գործսն W
16	զրարի բանսն W	34-35	իւրաքանչիւրոց BE
17	փորձի W	35	սոցա] նոցա B, կարգեցելոց E

ժուլմ, որով կերպարանի ցասումն կամ զքաւսանք հասանցելոց մտացն մերձ կարծել զԱստուած:

Ջի պարտ է պիտաւք չափել զձայնն:

Ջի ոչ է պարտ յանդգնութեամբ եւ արհամարհութեամբ իւիք պա-
5 տասխանի տալ կամ սուցել ինչ, այլ յամենայնի զհանդարտականն //
1921 եւ զպատուող առ ամենեսին ցուցանել:

Ջի ոչ է պարտ ակնարկել ակամբ նենգութեամբ եւ կամ այլով ձեւով, կամ շարժմամբ անդամոց վարել, որ խռովեցուցանէ զեղբայրն կամ արհամարհութիւն երեւեցուցանել:

10 Ջի ոչ է պարտ զարայարել հանդերձիւք կամ զգեստութիւն ոտից, որ շղուականք կոչին:

Ջի պարտ է անպսւնութիւնք վարիլ առ ի պէտս մարմնոյն:

Ջի ոչ է պարտ սուսել քան զպէտսն եւ առատութիւն ծախել ինչ՝ որպէս թերապիտութիւն:

15 Ջի ոչ է պարտ պատիւ խնդրել կամ զառաջինսն կամել:

Ջի պարտ է իւրաքանչիւր ումեք քան զինքն նախապատուել զա-
մենեսին:

Ջի ոչ է պարտ անհնազանդ լինել:

Ջի ոչ է պարտ անգործ ուտել, զկարողն գործել ինչ, այլ զպա-
20 րապելն ինչ ի պէտս ուղղութեանց ի փառասորութիւնն Աստուծոյ բռնաբարել զինքն ի փոյթն ըստ կարողութեան գործել ինչ:

Ջի պարտ է զիւրաքանչիւր փորձիւ վերականցուացն հանդերձ բա-
նի եւ հաւանութեամբ, սլապէս զամենայն ինչ առնել, մինչեւ ի նոյն իսկ ի կերակուրսն եւ յմպելի՝ որպէս ի փառս Աստուծոյ:

25 Ջի ոչ է պարտ յայլմէ յայլ գործ փոփոխել առանց փորձի յայս-
պիսիսն կարգեցելոց առանց, եթէ ոչ ուրեք ինչ անխտրելի հարկաւորութիւն յազնականութիւն անկարեցելոցն յանկարծակի կոչիցէ:

191ա Ջի պարտ է // իւրաքանչիւր ոք մնալ յոր կարգեցաւ եւ ոչ ան-
ցանել ըստ իւր չափն եւ ի վերայ ելանել ոչ կարացելոյն, եթէ ոչ որք
30 զայսպիսիսն հաւատացեալս փորձեսցեն զոք պիտեալ ազնականու-
թիւնն:

Ջի ոչ է պարտ յայլմէ գործաւորութեանէ յայլում գտանել ումեք:

Ջի ոչ է պարտ ըստ հակառակութեան կամ հեռի առ ոք առնել ինչ:

- | | | |
|----|--|----------------------------------|
| 1 | հասանցելոց] հաւանցելո B, հաւան- 16-17 | զամենիսէն B |
| | լոց C | 18 պարտ] E |
| 3 | պիտոք B, պիտոյիւթն D զձայնն] | 19 կարողն B ալլ] + և W |
| | դրանն D | 21 ինչ] + բարի AB |
| 4 | եւ] + կամ W | 22 վերականցւացն B |
| 5 | տալ] + և W հանդարտականն C | 23 ալսպէս] W |
| 6 | բողատուող D ամենեսան W | 24 կերակուրն W յմրելին W |
| 8 | անդամոյ W | 25 գործ] D փոխել W |
| 10 | հանդերձիւք] + և W զգեստութիւն սզեց- 26 | անխտրելի] անխնդրելի DE |
| | մունք B, զգեստութիւն ACD | 27 ազնականութիւն B անկարեցելոցն] |
| 11 | ըզդականք ACD շղականք B շուա- 27 | անկարգեցելոցն B, անկարգեցելոյն W |
| | կանք W | 28 զիւրաքանչիւր W յոր] որում W |
| 12 | ի] W մարմնոցն B | 29 եւ] ABCD կարացելոցն E |
| 13 | է] ABCD ինչ] C | 30 հաւատացեալք W զոք] + ի W պի- |
| 15 | դառաչինս W | տացեալ W |
| 16 | նախապատուել B, նախապատուել W | 32 գործաւորութեանէ W ալլոց E |

Ջի ոչ է պարտ նախանձել ընդ այլոյ յաջողութեան եւ ոչ խնդալ
այլոց նուաստութեամբք:

Ջի պարտ է սիրովն Ջրիստոսի տրտմել և՛ վշտանալ ի վերայ
եղբարն նուաստութեանց եւ ուրախանալ ի վերայ ուղղութեանց:

5 Ջի ոչ է պարտ անխտիր լինել առ մեղուցեալսն կամ դադարել
առ նոսա:

Ջի պարտ է գյանդիմանողն երկիւղի Աստուծոյ սղէկիզութեամբ
յանդիմանել լիտսւորութեամբ դարձման մեղուցելոյն:

Ջի պարտ է յանդիմանեցելոյն կամ սաստեցելոյն ընդունել յսւ-
10 ժարութեամբ ծանուցեալ զիր ազուտ յուղղութեանն:

Ջի ոչ է պարտ մեղադրեցելոյ ուրուք զայլումն առաջի նորա կամ
այլոց ոմանց ընդդէմ ասել մեղադրողին: Իսկ եթէ երբեք անբան ու-
մեք երեւեցի մեղադրութիւնն առ անձինն յուզել բանս մեղադրողն
եւ հաւանեցուցանել կամ հաւանիլ:

19/բ Ջի պարտ է իւրաքանչիւր ումեք, որչափ է զսարութիւն, // բժըշ-
կել զայն, որ ունին զմեմանէն:

Ջի ոչ է պարտ չարայուշ լինել զղջացելոյն ի վերայ մեղանացն,
այլ ի սրտէ թողուլ:

Ջի պարտ է զասացողն ապաշխարել ի վերայ մեղանացն ոչ
20 միայն զքանալ, որով մեղան, այլ եւ պտուղս արժանաւոր ապաշխա-
րութեան առնել, քանզի զի պարտ է, որ ի վերայ առաջին մեղանաց
խրատեսցաւ եւ թողութեան արժանի եղել, եթէ դարձեալ մեղիցէ՝ ի
վերայ առաջնոյն կազմէ ինքեան զդատաստանն սրտմտութեան:

Ջի պարտ է զկացեալն ի նուաստութեան զկնի առաջին եւ երկ-
25 րորդ մտադիրութեանն յայտնել վերակացոյին թերեւս արդեսաւք ի
բազմաց սաստեցեալ պատկառեցէ: Ապա եթէ եւ ոչ այսպէս ուղղես-
ցի իբրեւ զգայթակղութիւն ի բաց հատանել այնուհետեւ իբրեւ զհե-
թանոսական կամ իբրեւ զմաքսաւոր տեսանել:

- | | |
|---|--|
| 1 աղողութեան B, յաղողութիւն DW | 20 զղջանալ] + ալ ի սրտէ թողուլ զի |
| 2 այլոյ D նուաստութիւն B, նուաստու-
թեամբ W | պարտ է զասացողսն ապաշխարել ի |
| 4 նուաստութեանց B, նուաստութեամբ W
ուղղութեանց W | վերայ մեղանացն ոչ միայն զղջանալ |
| 5 մեղուցել B | զղջացելոցն D եւ] B արժանաւորս W |
| 7 երկեզի BCW | 21 մեղանացն BEW |
| 8 դիտաւորութեան W մեղուցելոցն EW | 22 եթէ] և W |
| 11 զայլումն] զայլ ոմն BC, զայլ որ W | 23 սրտմտութեան] տրտմութեան W |
| 13 մեղադրաւղն W | 24 զկացեալսն W |
| 14 յաւանել W | 25 վերակացոյին B արդօք B, արդեօք DE,
արդեօք W |
| 15 որչափ է] որ չափ է E | 26 եւ] W |
| 16 ունիւն] + ինչ W զնմանէ W | 27 ի լաց] իրաց W |
| 18-19 ալ ... մեղանացն] BW | իւրեւ] W |
| | 28 սաքսաւոր E |